

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲՈՒ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պաշտոնային համար 12 ֆունտ
» » վեցամսեայ 6 »
Արտատպանի » 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկեղ հետեռեայ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ Редаction du journal
„Иравункъ“ „Iravounk“
ВАРНА (България). VARNA (Bulgarie)

Խմբագրության ուղղակի գրություն
և չեն դրկուի եւ յարմար դասում
ներք միայն կը հրատարակուին անդո-
ղովին կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
սեն անդի անգամներու համար 20 0/0
գեղ կը լինի:

ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Գ.

Կազմելի խմբակները բաղկա-
նալու են ի սկզբան շատ սակաւա-
թիւ անդամներէ, որոնք այս սիւ-
նակներու մէջ բացատրուող ուղ-
ղութեան անկեղծօրէն յարած և
համաման կամ մերձաւոր սկզբ-
ունքներու և կարծիքներու տէր
մարդիկ պարտին ըլլալ, որպէս զի
կարենան առաջին օրէն համերաշխ
ողով իրարու գործակցել, ինչ
որ հոգին պիտի կազմէ մեր բող-
ձացած կազմակերպութեան:

Ասանկ անձեր ամէն տեղ գէթ
3-4 հատ կրնան գտնուիլ: Ասկէ
աւելին ալ հիմա պէտք չկայ: Թիւր
մեկնութեան տեղի տուած չըլլա-
լու համար, փութանք անմիջապէս
յարել թէ համախոհութեան այս
պայմանը չենք գներ: Լուրջ վիճա-
բանութիւնը կազմակերպութեան
չըլնական արտաքսելու նպատա-
կով: Ընդհակառակը, խոհուն
կանխակալ մտածումներէ ազատ
անձերու միջեւ, խնդիր մը լու-
սաբանելու դիտումով միայն կա-
տարուած վիճարանութենէն մեծ
օգուտներ կանկալենք կազմա-
կերպութեան համար: Սակայն
անհրաժեշտ է խոյս տալ այն ան-
վերջ ապարդիւն և փաստակար վե-
ճերէն որոնք տարբեր սկզբունք-
ներ, տարբեր տեսակետներ ու
նեցող մարդերու միջեւ սովորա-
կան ու շատ բնական են:

Համերաշխութեան տեսակետով
պահանջելի առաջին պայման մըն
է նաեւ անդամակիցներու փոխա-
դարձ վստահութիւնը իրարու ան-
ձին նկատմամբ: Անոնք պէտք է
որ իրարու մօտէն ծանօթ ըլլան,
ճանչնան իրարու նկարագիրը, և
վստահ ըլլան իրարու անկեղծու-
թեան, պարկեշտութեան աղ-
գասիրական ոգիին և անկողմնա-
կալութեան վրայ արդի կուսակ-
ցութիւններուն նկատմամբ: Կու-
սակցական մարդիկ, թէեւ ըլլան
անկեղծ ու ազնիւ, հարկ է որ
խմբակներու կազմութեան ժամա-
նակ, ինչպէս նաեւ անկէ ետքը,
հեռի մնան այս ձեռնարկէն, մին-
չեւ որ կազմակերպութիւնը բա-

ւական ճիւղաւորուի և հաստա-
տուն հիմերու վրայ դրուի: Այն
ժամանակ կարող են կազմակերպու-
թեան մէջ մտնել ամէն կուսակ-
ցութենէ մարդիկ, որոնք իրենց
ազնիւ նկարագրով վստահութիւն
կը ներշնչեն և կը համակրին
կազմակերպութեան ուղղութեան,
որ իր լայն հայեացքներուն մէջ
պիտի ընդգրկէ ամէն ձեռնարկ,
հետեւապէս և ամէն կուսակցութիւն
որ ազգային է, օգտակար է և
ամէն ինչ որ հայկական է: Այս
պիտի ըլլայ այն բարձր յատկա-
նիշը որով կազմակերպութիւնը ու-
րոշապէս զանազանուի կուսակցու-
թիւններէ և ինքն ալ չի դառնայ
նոր կուսակցութիւն մը, այսինքն,
նոր փորձանք մը ազգին գլխուն:

Հաւանականաբար ընթերցողը
պիտի առարկէ թէ այնքան հա-
մեստ սկզբնաւորութիւն մը՝ տե-
ղական 3-4 հոգիէ բաղկացած
խմբակներու միջոցով, ինչ դրա-
մական և բարոյական ուժ կարող
պիտի ըլլայ գոյացնել և ինչպէս
կրնայ ստանալ այն կարեւորու-
թիւնը, որ հարկաւոր է, որպէս
զի կազմակերպութիւնը կուսակ-
ցութիւններէ վեր դիրք մը բռնե-
լով, ներկայանայ օր մը իբր ըն-
դարձակ և համազգային հիմ-
նարկութիւն մը՝ ընդգրկող ինչ որ
ազգային է, ինչ որ հայկական է:

Ձանձք բացատրել այս ամե-
նակարեւոր կէտը որմէ կախում
ունի գործին յաջողութիւնը:

Ամէն բանէ առաջ գիտնալու
ենք թէ ասանկ ծրագիր մը գոր-
ծադրուելու համար կարօտ է եր-
նար տարիներու անընդհատ աշ-
խատութեան: Յաջողութեան գաղտ-
նիքը արդէն յամր, սակայն գի-
տակցական գործունէութեան մէջն
է: Անոնք որ արագ գործունէու-
թեամբ, քիչ ժամանակի մէջ, մեծ
գործեր կատարուած տեսնել կու-
զեն, չունին բաւական մտքի հա-
սունութիւն հասկնալու համար թէ
մեծ գործեր ընդհանուր ժողովրդ-
դային ուժերով կը կատարուին:
Իսկ այդ ուժեր չեն կրնար գո-
յանալ դարերով ստրկութեան են-
թարկուած ժողովուրդի մը մէջ,
ցորչափ նախապէս անոր բարբեր
յեղաշրջուած, ու անոր գաղա-

փարները ազնուացած և բարոյա-
կան որոշ բարձրութեան մը հա-
սած չեն: Այս չէ՝ պատճառը որ
Բ. Դրան ցոյցին ժամանակ Հըն-
չակեաններու մեզ յանձնած ա-
տրճանակները գետին նետեցինք
ու փախանք և Դաշնակցականներու
բաշխած զէնքերը հողը փորելով
թաղեցինք, կամ Գիւրտին ծախե-
ցինք:

Կը հառկնա՞ս, սիրելի ընթեր-
ցող, մեզի ամենէն աւելի պէտք
եղած բանը մեր բարբերուն ազ-
նուացումը, մտքի հասունութիւն
և գաղափարներու յեղաշրջումն է,
և ասոնք իրագործուելու համար կը
պահանջեն շատ երկար ժամանակ:
Այլ չխաբենք ինքզինքնիս: Մեր
ազնունքը գոնէ իբր դա՛ս թող
ծառային մեզի: Հերի՛ք երբեք
տուժեցինք: Ամփոփուելու, խոհուն
միտքով ու մեր դժբաղդութեանց
մեծութիւնը հաւաստարկչաղող կո-
րովով գործելու ժամանակ է ա՛լ:
Չգնեք մէկ կողմ յանձնապա-
տանութիւնը և ինքնահաւան թե-
թեւամտութիւնը: Տոկուն և հիմ-
նական աշխատութեան նայինք:

Այսօր ընկերութիւն մը հիմնե-
լով, 2-3 տարուան մէջ Հայաստանը
թիւրքիոյ, Ռուսաստանի և նոյն
իսկ Պարսկաստանի դէմ ոտքի հա-
նել, բոլոր թշնամիները ջախջա-
խել ու հայկական անկախութիւնը
հռչակել տրամադրող անմիտ ծը-
րագիրներու հետ գործ չունինք:

Պաղ արիւնով, անվախ սիրամով
իրականութիւնը գիտենք, սրմեզի
պիտի ըսէ թէ տասնեակ տարի-
ներու աշխատութիւն պէտք է որ-
պէս զի Հայաստանի հիմա ծխա-
ցող նիւթական ու բարոյական ա-
ւերակներուն վրայ վերաշինութիւ-
նը սկսի, որպէս զի հայ որբերը
մեծնան և բռնեն հարկը հազա-
րաւոր հոգիները տեղը զոր թուր-
քը ջարդելով՝ Հայաստանէն խլեց
անոր ամենէն կարեւոր ուժերը:
Մեր դժբաղդութեանց ընդարձա-
կութեան գիտակցութիւնը ունե-
նանք և ըստ այնմ գործենք: Ու-
րիշ ճամբայ չիկայ փրկութեան:
Մեր ծրագրին յաջողութեան
երկրորդ գաղտնիքը սակաւաթիւ,
համերաշխ, համախոհ և գործին
օգտակարութեան խորապէս հա-

մոզուած անձերու նախաձեռնարկ
ըլլալուն մէջ է: Այս յատկութիւն-
ները իրենց անձին վրայ միացնող
հինգ անձերու միութիւնը աւելի
օգտակար և աւելի հիմնական
գործեր կրնայ տեսնել քան իրա-
րու խօսք ՀՀակցող թեթեւամիտ-
ներու բանակ մը: Քանակը նշա-
նակութիւն չունի. որա՛կն է որ
պիտի հարկէ ճանապարհը: Սա-
կաւթիւն անձերու լուրջ ոգեւո-
րութեան, պարկեշտութեան և
անկողմնակալութեան հրապուրիչ
օրինակը՝ միացած իրենց գաղա-
փարներու նպատակայարմար և
գիտակցական բրբաղանտային
հետ՝ անվրէպ բարոյական մեծ
ազդեցութիւն առաջ պիտի բերէ
ամէն դասակարգերու վրայ: Օրի-
նակը վարակիչ պիտի ըլլայ: Բը-
րբաղանտաբ գլխաւոր միջոցնե-
րէն մին է լսարաններու կազմա-
կերպութիւնը, որոնց նպատակը
պիտի ըլլայ առողջ գաղափարնե-
րու, գիտական, տնտեսական և
այլ օգտակար ծանօթութիւններու
տարածումով կազմակերպութեան
սկզբունքներուն համար հող պատ-
րաստել ժողովրդին ամէն խաւե-
րու մէջ, ուրկէ տակաւ հասուն-
ցած ուժեր պիտի գան զօրաց-
նել կազմակերպութիւնը: Սա շա-
ճապարեք նոր անդամակիցներ
գտնելու. որովհետեւ անգամնե-
րու բազմութեան պէտք չունի,
այլ համոզուած, ընտրուած գոր-
ծակիցներու և արդէն ամէն ան-
կեղծ Հայու վրայ կը տեսնէ իր
ապագայ անդամն ու աշխատակի-
ցը: Ի՞նչ հարկ է աճապարել:

Խմբակները կունենան անշուշտ
իրենց կազմական կարճ կանոնա-
գիրը և գործունէութեան ուրոյն
յատակագիր մը որոշ տրամադրու-
թիւններով, որոնց իբր հիմ պիտի
ծառայեն այստեղ բացատրուած
սկզբունքները: Այս մասին այժ-
մէն մանրամասնութեանց մէջ մըտ-
նել անօգուտ է: Եթէ նոր ուղ-
ղութեան գաղափարը առ այժմ
նոյն իսկ տեղ տեղ միայն արմատ
բռնէ, ա՛յն ատեն կարգ կուգայ
կազմակերպական և ուրիշ մանրա-
մասնութիւններու:

Մենք կը խորհինք թէ մեր

բարքերուն լաւ և յոռի կողմերը միանգամայն աչքի առջեւ ունեւնալով, յարմարագոյն և դիւրագոյն միջոցն այս է մեր մէջ նիւթական և լարոյական պատկառելի ուժ մը տակաւ գոյացնելու: Եւ չենք կարծեր բնաւ որ ասանկ դիւրին ու համեստ սկզբը նաւորութեան մը իսկ յաջողութեամբ ձեռնարկելու անկարող ըլլանք: Ով որ այսչափին համար ալ յոռետես ու անյոյս է, պէտք է որ ընդունի թէ՛ հայը բացարձակապէս դատապարտուած է, հիմայ և միշտ, հաւաքական ամենագոյն գործունէութիւն մը իսկ արտադրելու անընդունակութեան: Մենք այս կարծիքէն չենք, ու չենք ուզեր ըլլալ, որովհետեւ հաւատք ունինք Հայութեան ապագային վրայ:

ՄԵՐ ԿԱՐՑՑԵԱԼՆԵՐԸ

Հայր Շարմանի տնունը ամէն Հայու ծանօթ է արդէն: Այս վեհասիրտ մարդը Էսքաֆէի մէջ հոգեյոյզ և պերճախօս կոչ մը հըրատարակած է որով կը հրաւիրէ իր հայրենակիցները օգնութեան հասնիլ Հայաստանի և մասնաւորապէս Վանի, Մուշի և Բաղէշի հայ կարօտեալներուն որոնք անօթութենէ և մերկութենէ փճանալու վտանգին մէջ են: Դրամ և ուրիշ նպաստներ պիտի զրկուին Հայր Շարմանի հետեւեալ հասցէով.

R. P. Charmetant

20, rue du Regard à Paris

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ այս վեհանձն կոչը, զոր մեր Սօփիայի յարգելի պաշտօնակիցը, Գրառիկ տէր Պալքան, հրատարակած էր, արձագանք գտեր է Պուլկարիոյ մայրաքաղաքին մէջ ուր արդէն յանձնաժողով մը կազմուած է հանգանակութիւն մը բանալու համար: Գրառիկ տէր Պալքան խմբագրութիւնն ալ կընդունի զբաւական նուէր, զոր պիտի հրատարակէ իր սիւնակներուն մէջ և պիտի յանձնէ հանգանակիչ յանձնաժողովին:

Վառնայի մամուլն նոյնպէս չուզեց անտարբեր մնալ այս շարժումը առջեւ որ հարիւրաւոր հայ կենսերը փրկելու սահմանուած է: Շարժում փութաց հանգանակութիւն մը բանալ որուն արգելքը պիտի զրկէ Գրառիկ տէր Պալքանի խմբագրութեան: Բոլոր սրտով կը համակրինք մեր յարգելի պաշտօնակցին այս ձեռնարկին, որուն մեծաւոյս ենք թէ հայ ժողովուրդը չպիտի զանալ իր աշակցութիւնը:

Եւրոպայի հայ գաղթականութեան գեղեցիկ առիթ մը կը ներկայանայ իր պարտաճանաչութեան մէջ հզօր ապացոյցը տալու թո՛ղ տայ ով որ կրնայ և որչափ որ կրնայ՝ զրկելով իր նուէրը՝ իր դիւրութեան համեմատ, հայր

Շարմանի, Գրառիկ տէր Պալքանի կամ Շարժումի, որուն փութացինք մենք ալ յանձնել իրաւաւոր շատ համեստ քսակին լուծման:

Մեր հարուստ և բարեկեցիկ դատակարգի պարտինք յիշեցնել թէ Սօփիայի մէջ բացուած հանգանակութեան պատշաճ չափով մի մեր մասնակցութիւնը պատուոյ կէտ մըն ալ մեզ համար: Օտարազգի տարրեր մեզ պիտի դատեն մեր բռնկիւք դիրքին համաձայն այս գործին մէջ:

ԻՄ ՀԱՌԱՏՔ

ԱՌ Մ. Զ...

Անպերհէ վե՛ր, կապոյտե՛ն վե՛ր անաւան, Եր քաւայի հրաւստ գունդն արեւի. Հոն ուր անպեր, հսկայ շանթերն ա՛յ չըկան, Զորոքիւն մը, — անեղ քա՛ն մը կեռելի:

Խո՛ր, ալիկո՛ծ, անագորո՛յն ու անծի՛ր Կոնակներուն այդ մշտնադ ձեռնովի Զեռ նայածքը դարձուցե՛ք դո՛ւք վշակիր: Ո՛հ, հոն ճեղ ալ քաւայն քան մը կը պահուի: Զեռ կոտորի՛ն ճակ մեկ կոյս մը կը գտնէ, Որ պզտիկ է, շատ պզտիկ է իր գունդում: Բայց այդ հսկայ հիշիլի մեկ փրկեռեցի՛ք, Հոն անծանօթ գորոքիւն մը կայ պահուած:

... Օ՛հ, անպերհէ՛ն, կապոյտե՛ն վե՛ր անաւան, Զայն մը խորին պատասխանեց ինձ յուզում. — «Ես պարգասիս հիշիլ մըն եմ անկրման Զոր հրկիսի ճակի՛ն դրած է Աստուած:

Կոնակներուն խոռովի մեջ փրկուրած, Զայն մը քրքում կը մտնէր անդառն. — «Ես շիր մըն եմ, — սե՛ւ արցունք մը դառնացած, — Զոր այս երկրի վրայ քափեց Տեռն արդար:

Բայց... անշի անգուսպ ձայն մը կը լսեմ Որ անեկի՛, անառ՛ի է, բայց գրքած. Ո՛հ, ասիկա խո՛սիս ձայնն է, ես գիտեմ, Որ ինձ կըսէ. «Ետքեանդ մեջ է Աստուած»: Փ. Պոլիս Բ. Բ.

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Փ. Պոլիս 12 մարտ

Արեւելիս թղթակիցը նորէն կը պատասխանէ մեզ թէ Իրաւունքի եւ թէ Արեւելիս մէջ: Անշուշտ իր իրաւունքն է առիկայ: Բայց իր գործած ընդուն շատ մարդու չէ, և անարժան է լուրջ թղթակցի մը: Այն պիտի ստորին ամբաստանութիւններ կընէ որ մարդ չկրնար պատասխանել իսկ: Ուշադիր ընթերցողներ արդէն գիտեցին թէ մեր երկուքն ո՛վ հնարած է «հրէշային սուտեր»: Թրքական

հանգանակութեան խնդիրը տակաւին չը պարզուեցաւ: Մենք ոչ ժամանակ ունինք ոչ ալ փափագ վիճարանելու ասանկ անձերու մը հետ որոնք կը զբոսարտեն և կը նախատեն:

Երբ լսեցինք թէ կառավարութիւնը ձեռք առած է քննել վարդապետաց օրուան ցաւալի գէպը պատմելու համար յանցաւորները, շատ ուրախացանք: Վերջապէս օրինաւոր ատեան մը պիտի գտնէր այն չար ոգիները որք կ'աղաւտեն ամէն ինչ և կը պղտորեն ջուրը՝ որոնք ընկել համար: Անոնց պատժուիլը, գէթ մէկ աստիճան վերջ պիտի տար ներկայ խայտառակութեան: Բայց յուսախար մնացինք: Փաղաքապետը կը փնտէր սուլիչ գործածողը և հրազէն արձակողները: Հետեւապէս իրենց պետին, աւագներէ քահանան զրկեցին կառավարութեան և հազար ճիւղերով կարողացան համոզել կառավարութիւնը որ զուտ ազգային հանգամանք տայ պղ գէպին: Փաղթականները և յեղափոխականները աքսորելու սպառնացող պարոնները ի՞նչ շուտ փոխած էին իրենց դերերը:

Զեր պատահական թղթակցին ալ մէկ քանի լուրեր հրատարակած էր իբր թէ յառաջիմական տարրին կողմէ հրազէն արձակուելու է դատաւորներուն տունին առջեւ և թէ անստորագիր նամակներ զրկուել են քաղաքիս աւագներէ քահանային: Երբ տեղւոյս վարչապետը հոս էր, անստորագիր նամակ մը ստացեր էր որպէս զի զպրոցին ի նպաստ խօսի: Մենք գիտենք թէ ինչ կարծեն այդպիսի անստորագիր նամակներ: Հետեւապէս չը յիշեցինք անգամ: Եթէ իրաւ գրուած են այդ նամակները կամ թէ հրազէն արձակուած է, թէ և հարիւրին մէկ անգամ հաւանականութիւն չըկայ, յետադիմականներուն անազնի միջոցները կը ներկայացնեն: Հոչակաւոր «սուլիչ» նորէն ստանձնած է իր դերը: Դասատուները սուլիչին միջոցով ոստիկաններ կոչած են մինչեւ առաւօտ սպանցելով խեղճ մարդերը: Զարմանալին սա է որ յանցաւորը գտնուած չէ: Ոստիկանութիւնը եթէ հարցաքննէր տրեցիները, թերեւ գտնէր բուն յանցաւորը:

Բայց միանգամ ընդ միշտ վերջ տալու համար այս խառնակ և սուտ լուրերուն, կը խոստանամ Իրաւունքի խմբագրութեան կողմէ Պուլկարիոյ ամենէն յառաջիմական համարուած զպրոցին հարիւր Փրանք նուիրել և հրաժարիլ Իրաւունքի թղթակցութեանէն, եթէ մեր յետագիմականները կամ անոնց պետ թղթակիցը կարենայ ապացուցանել պատուաւոր մարմինի մը առջեւ թէ յեղափոխական մարմին մը կամ թէ մեր ծանօթ յառաջիմական պետները կաղմակերպած են Ս. Վարդապետին տօնի օրուան խոռովութիւնը, կամ խրատ տուած են խեղճ պատանի մը հրազէն արձակել կամ թէ ըստ պատահական նամակներ գրել: Միւս կողմէ պատրաստ եմ ապացուցանել թէ կանխամտաւորութեամբ ոչ վրդէրներ պատրաստուած էին յետագիմականներու կողմէ, թէ իրենց կեանքին մէջ հանդէսի երես չը տեսնող կասկածելի նըկարագրի տէր անձեր յատկապէս սքըճարաններէ բերուած էին, թէ Մեծազաններու, թղթակցիցին և յազմանդամ անձին միջեւ յարաբերութիւններ կային այն օր:

Ահա մեր վերջին խօսքը:

Սիւրիտէ 8 մարտ

Իրաւունքի 14րդ, թիւին մէջ տեսնուեցաւ «Հանդէսի մէջ վէճ» վերնագրով և խմբագրական նախաբանու-

թեամբ սկսող թղթակցութիւն մը որ զրկուած էր Սիւրիտէէն:

Նոյն հանդէսին ներկայ գտնուելու համար, արդարասիրական պարագ մը կը համարինք քանի մը տողով պարզել ճշմարտութիւնը, զոր անստորագիր Պ. նամակագիրը՝ կարող մը անհեթեթ զրպարտութիւններու տակ ծածկած և միանգամայն տեղի առած էր խմբագրական դիտողութեան մը, ըստ որում՝ իբր թէ վարդապետաց տօնին օրը Սիւրիտէիցի ալ Փ. Պաղեցիներու պէս բանակուել մը հանդիսատես ըլլալու խնդիր հարկին ենթարկուած են: Բողոքովի՛ն սխալ:

Նախ՝ անիմա և անտեղի էին նամակագրին թշնամական հոգով տեղացած անձան նախատինքներն: Ստուգութիւնը սա է որ Տ. Սեթեան, Սրմաշի դպրեվանդ շրջանաւարտ ու կարող ուսուցիչը, իւր յուզիչ ու հմտակցատեղաւորութեամբ՝ խոնուող բաղմութեան խանդավառութիւնը վերին աստիճանի բորբոքել է ու սրտերը յուզել է զատ, ինչպէս ամէն հասկցողներուն, այնպէս ալ թաղականութեան և հոգաբարձութեան կողմէ համակրալից շնորհակալութիւն ընդունեցաւ, մինչդեռ վերոյիշեալ նամակը զայրոյթով կարգացուեցաւ այստեղ:

Երկրորդ՝ եղիչէի անաչառ ըլլալուն կամ չըլլալուն մասին Տ. Սեթեանի ակնարկներն, լուրջ քննական տեսութիւններ էին, որոնց յարգն անշուշտ քաջ պատմաբան մը կրնար գնահատել և ոչ թէ կրօնական ու ազգամոլական նեղաստեղծ նախապաշարմունքով տոգորեալ նամակագիրն, որ չը չիկնիր անաչառ յանապատութիւնը դատափետու հոչակելու: Ահա տիպար հայ շօյիլիստ մը՝ «Ո՛վ բարբ, ո՛վ դարբ», իբր թէ հաւատաքննական դարբու մէջ ըլլայինք: Այդպիսեաց չունինք ուրիշ ըսելիք, բայց եթէ յիշեցնել պատմագէտ Փարազանի տա համոզկեր տողերը. «Վնասակար, միանգամայն ծաղրելի է, նաեւ զրուակի՛ պարծենքոտութեամբ, պատմութիւնը փրժուել գովեստի հով փայլուն երեւցուցանել ջանալ: Զիք ինչ որ այնպէս անաւատացուցանէ զիւցաղնական գործոց անգամ բուն յարգը՝ ինչպէս սին և պարծուկ վերագիրներ: Իբր պարտին խօսել ի պատմութեան, ոչ թէ ներքոյն: Ազգային սնապարծութիւնը, չողորթողներուն մեծագոյն վնասակարութիւնը սա է, որ կ'ապականեն հասարակաց ուղիղ բանը և խուլ գործեն զժողովուրդն ձայնի քննադատութեան»: Եւ ահա Տ. Սեթեան ճիշդ այս կէտերն ի նկատի ունենալով և զգուշանալով Պ. նամակագիր նման ծուռ մեկնողներէ, նախապէս ներկայից ուղղեց (ոչ թէ ներողութիւն խնդրեց) սա նախադասութիւնը թէ՛ «Մեր մէջ, դժբաղդաբար, պատմութիւնը միակողմանի ուսումնասիրուած ըլլալով, գուցէ ըրած ակնարկութիւններս վայրկեանաբար խորթ թուին. սակայն վստահ եմ թէ յայտնելէ ճշմարտութիւններս աւելի ևս գոհ պիտի կացուցանեն զձեզ»: Արդարեւ խօսուածներն ալ խոր տպաւորութիւն ըրին համայն հանդիսականաց վրայ:

Երրորդ՝ ատենախօսութեան ձեւերուն դիտողութիւն ըրած էր: Կերեւի թէ Պ. նամակագիրն բնաւ տեղեկութիւն չունի ատենախօսութեան արուեստին: Ուստի բարեկամաբար կը յանձնարարենք իրեն աչքէ անցնել քանի մը գրագիտական դասագիրքեր, որոնք զինք պիտի համոզեն թէ Տ. Սեթեան նախանձելի կերպով ներկայացուց ատենախօսէ մը պահանջուած յատկութիւններն ու ձեւերը: Իսկ զայդով երկրորդ ճառախօս՝ Տ.

Ղ. Ն. ի խօսածին, ահա անոր առաջին նախադասութիւնը. «Միւսիս պատուելի Սեթեանը ամեն բան խօսած ըլլալով՝ մեզի ալ ըսելիք չը մնաց»։ Իրաւի Տ. Ղ. Ն., հազար անգամ չափուած, ձեռնած քանի մը խօսքերէ եւ Տ. Սեթեանի վարդանանց պատերազմի նկատմամբ ըրած նկարագրութեան մէկ մասն ալ անյայտօղ եղանակաւ կրկնելէ յետոյ, աշակերտի պէս՝ եզրէն անուան նուիրուած ոտանաւոր մ'ալ արտասանելով, վերջ տուաւ։ Հանդիսականք կարծեցին թէ այդ օրուան հերասն ոչ թէ վարդանն, այլ եզրէն էր։

Ահա այսպէս ամեն բան պարզելէ ետքը յաւելանք թէ շատ կարելի է որ Պ. Նամակագիրը այդ հանդէսին իսկ ներկայ չէր գտնուած, վասն զի հակառակ պարագային՝ կոյր կամ խուլ մը ըլլալու էր՝ ճամարտութիւնն այս աստիճան խեղաթիւրելու համար։

ԱՆԱՔԻ
ՀԻՒՍԻՍԵԱՆ

ԼՐԱՔԱՂ

Պուրբէշի համալսարանին բնուցական մարմինը որոշեց իւր հաստատութեան մէջ ներմուծել անգլիերէն լեզուի ուսումը որուն համար ուսուցիչ նշանակուած է քաղաքին հայ գաղութին անդամներէն մին, Տ. Վահրամ Մամիկոնեան։ Մեր արտագին շնորհաւորութիւնը։

Դաւրէթի Ղալա թաղի հայ վարժարանը ուսուցանողութեան կը ստանայ տարեկան 550 ռուպի նըպաստ, որ յատկացած է ուսերէնի գաւախտին։ Կովկասի կառավարչապետը հրահանգ զրկեր է Դաւրէթի ուսական հիւպատոսին՝ տեղեկագրելու իրեն թէ յիշեալ դպրոցի մէջ քանի աշակերտ կայ, ուսերէնի ուսումը ո՞ր դասարանէն կը սկսի, չաբաթը քանի ժամ այդ ուսումին յատկացուած է իւրաքանչիւր դասարանի մէջ եւ թէ աշակերտ մը տարեկան քանի ժամուանակ ինչ թուանշան ստանալու է որ կարենայ յաջորդ դասարանը փոխադրուի։ Նոյն դպրոցին Պարսիկ կառավարութիւնն ալ կուտայ 750 ֆռանգ պարսկերէնի լեզուի ուսուցման համար։

«ԻՐԱՆԻՆԻ»-Ի ՊԵՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ս. Ս. Սթարա-Չակօրա—ըՍտացանք և երկու բաժնեգիրն յանձնեցինք Շարժումին։

Գ. Պ. Ուստըր.—Ստացանք ձեր Մարտ 3 թուով նամակը և հինգ տօլարնոց չէքը, զոր հարկ եղաւ Սօֆիա զրկել գանձուելու համար։

Ինք չեկաւ մեր քով։ Երբ դրամը առնուի, պիտի գրենք իրեն։

Մ. Ա. Ռուսուր.—Համաժողովն քննարկեց և իրեն գրած է ինք արդէն մեր կարծիքը։ Կատարանն ստացանք թէ հրաժարած է այդ անխորհուրդ դիտաւորութենէն։

Փ. Պօլսոյ յօդուածագիրն երուն։ Այլ փակած ենք իրաւունքի սիւնակները ընդգծման թիւին ներու համար՝ վարդանանց օրուան ցաւալի դէպքին առիթով։ Երկու կողմերը ըսին արդէն ինչ որ ունենին ըսելիք։

Հակառակ գրութիւններու հրատարակութենէն ալ օգուտ մը չիկայ։ Մեր քանի մը գիտողութիւնները յառաջիկայ թիւով։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չինի արտաքին գործերու նախարարը և Ռուսիոյ գեապանը ստորագրած են արգէն այն դաշնագիրը, որով Քօնթ—Արթիւր և թալիէնուան վարձնոց կը տրուին ուսուցանողութեան և որով Չինի կարածն է երկաթուղիի մը շինութիւնը մինչև Քօնթ—Արթիւր։ Չինական պահապան զինուորները եղան Քօնթ—Արթիւրէ և թալիէնուանէ, ուր մտան ուսուցանողներ և պարզեցին ուսական գործակար։ Երկու նաւահանգիստները բաց պիտի մնան ամէն տէրութեանց մարտանաւերուն համար։ Ռուսիա իրեն վերապահած է մօքսային տուրքեր հաստատելու իրաւունքը։

Չինէն հասած լուրեր ուսական յաջողութեանց և Անգլիական շահերուն սպառնացող վրտանգներու մասին՝ մեծ յուզում յառաջ բերին Անգլիոյ մէջ։ Թայմըս խմբագրականներով մատնանիչ կընէ չինական խնդրին այն փոփոխութիւնը, զորս բրիտանական ժողովուրդը մինչև հիմայ լաւ հասկցած չէր։ Արտաքին և պատերազմական գործերու պաշտօնատնտեսներուն և նաւագործարաններուն մէջ արտասովոր ջլղային գործունէութիւն կը ընշմարտուի։ Լօնտրայի ուսուցանողներ և Պալիստեր երկար տեսակցութիւն մը ունեցան չինական խնդրին այն կարեւորագոյն պարագաներու մասին ուր ուսական և անգլիական շահերը իրարու կընդհարին։ Տեսակցութեան աղբիւրքը զաղանի կը պահուի։

Թայմըս կըսէ թէ լօնտ Սօլզբերի նախարարապետի և արտաքին գործերու նախարարի կրկին պաշտօնները արգիւստանոր կերպով վարեց մինչև այն ժամանակ երբ միջազգային ծանր դժուարութիւններ գլու երեսն եկած չէին։ Բայց 1895 էն ի վեր, ուր Եւրոպայի քաղաքական կացութիւնը սկսաւ կնճռուիլ, լօնտ Սօլզբերի պաշտօնավարութիւնը նուազ յաջող եղաւ, ինչ որ կտրելի է վերագրել անոր տարիքին, առողջական վիճակին և յոգնածութեան։ Շատ հաւանական է ուրեմն որ լօնտը մօտ օրեր գործէ բաշտեղով իր պաշտօնները լծողու ուրիշ պիտական մարդու մը։

Ռեպրէնիստր կազէր կը գրէ թէ կլատթօնի բժիշկները ալ չեն յուսար որ Մեծ—Ծնրը վերստին ապաքինի կատարելապէս, թէեւ իր այժման վիճակը կը կրնայ տեւել տակաւին քանի մը շաբաթ։

Գուպայի խնդրին մասին Սպանիոյ և Անգլիայի Միացեալ—Նահանգներուն միջև բանակցութիւնները արդէն հասած կերեւին այն կէտը, ուր պատերազմի կամ խաղաղութեան որոշումը ալ չի կրնար ուշանալ։ Ուսանողները կառավարութիւնը կը պնդէ թէ Գուպայի վիճակը օրէ օր այնքան կը ծանրանայ որ ինք ալ չի կրնար մարդասիրութեան և իր բարոյական ու նիւթական շահերուն տեսակէտով անտարբեր հանդիսատես ըլլալ այս կացութեան։ Կըսուի թէ հանրապետութեան արտաքին գործերու նախարարը Մատրիտ զրկած է ծանուցագիր մը որ իրերու կա-

ցութիւնը նկարագրելով կը պահանջէ որ ընդ փոյթ թշնամութեանց վերջ տրուի՝ Գուպային համար գոհացուցիչ պայմաններով և կըսպառնայ, հակառակ պարագային մէջ գործին միջամտել զէնքի զօրութեամբ։ Հանրապետութեան նախագահը որոշած է նաեւ վեհաժողովէն 1/2 միլիոն տոլարի վարկ մը խնդրել այն ոչ պատերազմող Գուպայիներուն ի նպաստ, որոնք ծայրայեղ թշուառութեան մէջ կը գտնուին պատերազմին հետեւանքով։

Լօնտրայի քանի մը լրագրիչներուն համաձայն՝ Սպանիա պիտի պատասխանէ եղբւր թէ բացէ ի բաց կը մերժէ ու եւս ոտնձգութիւն իր վեհապետական իրաւունքներուն՝ Գուպայի նկատմամբ։ Ուրիշ կարեւոր թերթեր կը հաստատեն թէ Սպանիա այդ պատասխանը տուած է արդէն ծանուցագրով մը, որով կը խնդրէ Միացեալ—Նահանգներէն՝ Գուպայիներուն նպաստ չի հասցնել այդ մարդերու ձեռով և կընդունի պայմանագրով մը որոշուած պատերազմին վերջ մը տալու համար, ինչպէս նաեւ իրաւախօս առեւտրի մը կազմութիւնը որ քննէ Մէյն զրահաւորին խնդրը։

Ջրոյցի մը համեմատ Սպանիոյ բազմաթիւ բարձր պաշտօնականներ, որոնց մէջ նաեւ նախարարներ, հակամէտ են խնդրը վերջացնելու Գուպայի անկախութիւն տալով, նիւթական պատշաճ հատուցումի մը փոխարէն, մինչդեռ կառավարութեան մէջ կայ ընդգիւծող կողմեր կուսակցութիւն մը որ կը պահանջէ ծայրայեղ ճնշողական միջոցներու դիմել, Գուպայի մէջ խաղաղութիւնը վերահաստատելու համար։

Սթանտարտ կիմանայ թէ Սպանիոյ և Միացեալ—Նահանգներուն միջև բանակցութիւնները խաղաղութեան տեսակէտով գոհացուցիչ արդիւնք մը տալ կը խոստանան ընդհուպ։ Ուսանողները Ամերիկեան զեապան խնդրերէ Միացեալ—Նահանգներու կառավարութեան յետաձգել առժամապէս ու եւս գործողութիւն, որով հետեւ Սպանիա պատրաստուած է գոհացուցիչ զիջողութիւններ ընել առանց իր վեհապետական իրաւունքներէն հրաժարելու։

Հանրապետութեան նախագահը կը կարծէ եղբւր թէ ամերիկեան կառավարութեան միջամտութիւնը ժամանակին հասած է և թէ խնդրը պիտի վերջանայ խաղաղութեամբ։

Եւրոպական տէրութեանց միջամտելու որոշումին մասին չըջաբերող զրոյցները կանխահաս են։ Ստոյգ է սակայն որ Յրանսապատրաստ է իրաւախօսութեան պաշտօնը ստանձնել, եթէ Միացեալ—Նահանգները և Սպանիա իրեն դիմում ընեն այս մտքով։

Մարքիզ Սօլզբերի հարաւային Յրանսա գնաց իր բժիշկին հետ։

ՕՍՍԱՆԼԸ

«Պիր գալ աշտան պերու» ժենէլտէ Օսմանլը նամը իլէ թիւրքէ վէ ֆրանսըզմա պիր կազէթա նէշը օլմայա պաշլամըշ տըր։ Իշպալ կազէթա կէնճ թիւրքիա նամ գոմիթէնին միւրէվիթի էֆքեարը իսէ տէ, պու կազէթանըն հէյէթը թահրիրիյէսի (խմբագրութիւն) «Օսմանլը իլթիհատ վէ թէրազըր ճէմիյէթի»նի թէշքիլ իտէն պազը թիւրք վաթանտաշլարըրըղտան միւթէշքիլ տիր։ պու վաթլար չիմտիլթ թիւրքիատա եաշայան հէր պիր միլլէթ ու մէզհէպէ պիր նազարլէ պագմազտա վէ մագսէտլէրի պիւթիւն օսմանլը թապաւարընը գարտաշ թէսմիյէ իտէրէք, վաթանըն վէ օսմանլըրըղըն իլէրի կիթմէսինէ միւնհասըր օլտըղընը կէօսթէրմէ կէ չալըշըյօրլար։ վէ էրմէնի մէսէլէսինէ կէլինճէ հագգը ինքեար իթմէյէրէք «հիւթիւմէթը հագըրէնին ֆէնա իտարէսինտէն իլէրի կէլէն էրմէնի վուգուաթըր ալէմ նազարընտա հայսիյէթիմիլի պէրպատ իթիթ» տէմէքտէ տիրէր։ վէ քէզա «խարապիլթտէ պուլընան վէ մահլիլթէ երկ վութմըլըր օլմանլըրըղը թէհիլքէտէն գուրթարմազ իլին» օսմանլը թապաւար օլման հէր միլլէթէլլէր պիրլէշմէլլէ թիւրքիանըն հիւթիւմէթը հազըրէնին կիւզէլ պիր իտարէյէ թէպտիլ իթմէք իչիւն էլ էլէ վէրէլիմ վէ Օսմանլըրըղը երկքսէյէ գալտըրտըղըրըղտա էրմէնիլթ վէ ինտանլըր տէ երկքսէյէ գալտըր օլուր, զիրա Օսմանլըրըղտա էրմէնիլթ վէ ինտանլըր տախի տախիլ տիր» տէյօրլար։

Թիւրք վաթանլէրվէրէրին պուքէլամլարը էկէր տօղրաշ եիլթէքի սէօլլէնիլթիօր իսէ, հէր պիր թիւրքիալը (խալամ վէ խրիսթիյան) իչիւն գապուլա շայան օլպիլէնէկի չիւրհէսիլ տիր։ ֆագաթ տօղրու երկրէլէ սէօլլէնիլթիլի նէտէն անլաշըլաճազ տըր։

Իշթէ պու նօգթատա իսթէր իսթէմէզ պիզէ թէրէտտիւտ վէ չիւրհէ հասըլ օլույօր։ պու վաթանտաշլար նէ եօլ իլէ պիլի իգնա իտէպիլէնէլլէր քի, հիւթիւմէթին զատըր ու ազալընտան կէնճ թիւրքէր եագալը գուրթարտըղտան սօնրա, թիւրքիանըն իտարէսինի էլլէրինէ կէչիւրթիլլէրինտէ իսլա միլլէթէ մախսուս օլման թապաւարալէթ օլմագսըղըն իսլամը վէ խրիսթիյանը միւսալի թուլաւազ ումուլըն սաատէթինէ վէ վաթանըն թէրազըրլաթընա խըրամէթ իթսինլէր։ թէհէսիլֆէն տէրիլ քի պու կիւնէ գատար մէյտանա չըգմըշ օլման կէնճ թիւրքէլլէրտէ պու նօգթալա տալիլ պիլի գանի իտէն աշվալ կէօրիւնմէտի պախուսուս Մուրատ պէյ նամընտա պիր միւրախին իքի սէնէ մուգատտէմ կէնճ թիւրքէլլէրէրէրէրէր

Печатница „Взаимность“ — Варна